# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԶԵՐԻ 30 ՓԱՍՏԱԲԱՆԻ ԿՏՐԱՄԱԴՐՎԻ «ՓԱՍՏԱԲԱՆ ԵԶԵԳԵԼՅԱՆ» ԹՈՇԱԿ

28.09.2016 17:56

***Հարգելի փաստաբաններ,***

Ֆրանսիայի Հանրապետության քաղաքացի, ՀՀ փաստաբանների պալատի պատվավոր անդամ, բարերար Ռայմոն Եզեգելյանի և Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի միջև շարունակական համագործակցության շրջանակներում՝ **Ռայմոն Եզեգելյանի կողմից տրված նվիրաբերության գումարից կանխավճարի կարգով կվճարվի ՀՀ փաստաբանների պալատի նախագահի կողմից սահմանած կարգով որոշված ևս 30 (երեսուն) փաստաբանի մեկ տարվա անդամավճարները:**

Նշված նախաձեռնության կապակցությամբ ՀՀ փաստաբանների պալատի նախագահի **28.09.2016թ. թիվ 416-Լ որոշմամբ** հաստատվել է «**30 փաստաբանի «Փաստաբան Եզեգելյան» թոշակ տրամադրելու մասին» կարգը**, համաձայն որի՝ շահառուներ կարող են լինել Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր մարզից երեքական փաստաբան, որոնց թեկնածությունը ներկայացնում է մարզի համակարգողը, իսկ եթե համակարգող ընտրված չէ, ապա՝ նախկին մարզային համակարգողը, հաշվի առնելով՝ թեկնածուի նյութական դրությունը, թեկնածուներին մարզի տարբեր քաղաքներից կամ բնակավայրերից ներգրավվելու անհրաժեշտությունը և կարգի 10-րդ կետում նշված հանգամանքները:

Կարգին համապատասխան որոշված ընդհանուրը 30 շահառուներին կտրվեն համապատասխան հավաստագրեր:

## Առաջարկվող նորություններ



27.04.2015ՌԱՅՄՈՆ ԵԶԵԳԵԼՅԱՆԻ ԵՎ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԻՋԵՎ ԿՆՔՎԵԼ Է ՀՈՒՇԱԳԻՐ

29.04.2015ՀՀ ՄԱՐԶԵՐՈՒՄ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԾԱՎԱԼՈՂ 80 ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻՆ ՇՆՈՐՀՎԵԼՈՒ Է ՄԵԿ ՏԱՐՎԱ ԱՆԴԱՄԱՎՃԱՐԻ ԿԱՆԽԱՎՃԱՐԻ ՀԱՎԱՍՏԱԳՐԵՐ



10.07.2015ՄԱՐԶԵՐԻ 80 ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐ ՍՏԱՑԵԼ ԵՆ ՌԱՅՄՈՆ ԵԶԵԳԵԼՅԱՆԻ ԹՈՇԱԿԻ ՀԱՎԱՍՏԱԳՐԵՐԸ

**14.12.2015** ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ 80 ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻՆ ՇՆՈՐՀՎԵԼՈՒ ԵՆ ՄԵԿ ՏԱՐՎԱ ԱՆԴԱՄԱՎՃԱՐԻ ԿԱՆԽԱՎՃԱՐԻ ՀԱՎԱՍՏԱԳՐԵՐ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })